

ՄԱՐԱՅ ԳԱՒԱՌ==ՄԱՐԳԵԱՒԱՌ.

Գ.

Մ. Խորենացուն յայտնի ջրհեղեղի և տապանի զրոյցներ Կորդուաց հաւանօրէն և Այրարատ աշխարհի լեռների մասին: Թէ Բուզանդարանի, թէ Խորենացու և թէ Կորիւնի յիշած «Հայոց Մարաց աշխարհ»ը չէ կարող Այրարատի Շարուրը լինել, այլ Հայաստանի հարաւում: Հոռոմայեցոց Marcmed-ներն են Հայոց Մարըր և Մարաց ամուր գաւառը, որ հնումն ընդարձակ է եղել, իսկ անունը պահել է հաւանօրէն այժմեան Մարգեաւառը: Մարակերտն է Մահկերտունը. իսկ այս էլ հաւանօրէն Կանգուար-Ագուաւաքարը: Խորենացու շփոթութեան հաւանական պատճառները: Ամփոփումն:

Մ. Խորենացուն անշուշտ անծանօթ չէր կարող լինել Հայոց ասորական և յունական դպրոցի աստուածաշնչեան տապանի լեռան վէճը, քանի որ նորան քաջ ծանօթ է ոչ միայն աստուածաշնչի ջրհեղեղի՝ այլ նաև այլ զրոյցներ: Մի կողմից նորան չէին կարող յայտնի չլինել Յովսէպոսին և մանաւանդ Հերոնիմոսին հեռաւոր երկիրներ հասած Հայոց տապանի լեռան ժողովրդական աւանդութիւնը. իսկ միւս կողմից նա լաւ գիտի, որ Ասորեստանի Թագաւորի հայրասպան որդիքը ըստ Աստուածաշնչի «Աղրամեղէք և Սարասար . . . զերծան յերկիրն Արարադայ», որ մի այլ տեղում կրկնուում է. «Գնացին փախստական ի Հայս»². որովհետև ինքն էլ ասում է. «Եկին փախստական առ մեզ»³ և միաժամանակ Երեմիայի «Այրարատեան Թագաւորութեանն և Ասքանա-

1. Չորր. Թագաւոր. ԺԹ, 37:

2. Ես. 11, 38:

3. Խորեն. Ա, ԻԲ, 57. Հմմտ. Բ, Ը, 80:

զեան զնդին» յիշատակուած թիւնը բերում է իբրև հաւաստի վկայուած թիւն ազգիս «Մերոյ թագաւորութեանն»¹, բայց և այնպէս տապանի լեռ չէ կոչում Մասիսը, չնայելով որ քանիցս յիշում է և ոգևորութեամբ նկարագրում: Միւս կողմից անշուշտ նա լաւ ծանօթ էր ասորաբարելահան աւանդութեան, եթէ ոչ Պեշիթոյից, գոնեա Եւսեբիոսից, որի Եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութիւնը նորան յայտնի է², այլ և Բուզանդարանից, թէև անունը չէ տալիս³: Վերջապէս միակ հայ պատմագիրն է, որ տարբերում է Սրարատ հիւսիսում և Արարաղ հարաւում, բայց և այնպէս չէ յիշում տապանի Կորդուաց լեռը, չնայելով որ գիտէ ևս թէ Կորդուացիք հայ նախարարութիւն են⁴:

Ընդամին մոռանալու չէ, որ Խորենացուն անշուշտ յայտնի էին բացի Ազատ Մասիսից Բուզանդարանի Մասիս-Միտիանն Ապահունիքում և Կորդուաց արևմտեան լեռնաշղթան՝ Աստուածաշնչի «Մասեաց . . . լեռը», Սեմի սերնդեան բնակութեան հիւսիսային սահմանը, որ Ստրարոնին և Պտղոմէոսին ևս յայտնի է Մասիոս անունով⁵: Եւ եթէ նա սոցանից և ոչ մէկի անունն իբրև տապանի լեռ յայտնապէս չէ յիշատակում, բայց ակնարկում է գոնեա վերջին երկուսի համար: Խորենացուն ի հարկէ ծանօթ էին տապանի ջրհեղեղի և այլ շատ զրոյցներ, եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք նորան վերագրուած աշխարհագրութիւնը⁶, և միայն ի նկատի ունենանք նորա պատմագրութիւնը, նա՛ յիշատակելով «Բիւռոսեան Սիրիլլայի» զրոյցը՝ յայտնում է և իւր կարծիքը. «Զայսուսիկ թէպէտ առաւ-

1. Խորեն. Ա, ԻԲ, 47. Երեմ. ԾԱ, 27: 2. Խորեն. Բ, Ժ, 83:

3. Յ. Դադրաշեան, Փ. Բիւզանդացի և իւր պատմութեան խարդախողը, Վիեննա 1898:

4. Խորեն. Բ, Ը, 80: 5. Ծնունդը, Ժ, 30. Ванскія Надписи, III, 104:

6. Փոլեզիոյ Պեսիլիա աշխարհի մայրաքաղաքն է «Անտիոքիա, ուր ասնն շինել զտապանն Նոյի» (ԽԱՎ, 600. ԽԱՊ, 13). իսկ ըստ ԽԱՍ, 23 «Կիւռոսոս», որ Ապամէան է (Murad VII, 46):

պել ոք՝ թէպէտ ճշմարտութիւնն հաշուել համարեսցի, բայց ես որպէս հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է»։ Ապա պատմում է Ուիմպիոդորոսինը. «Յետ նաւելոյ Քոնստանթնոպոլիսի [Նոյի] ի Հայս և դիպելոյ ցամաքի, ասէ, զնայ մի յորդուոց նորա . . . Սիմ ընդ արեւմուտս հիւսիսոյ . . . ի կողմանս Ասորեստանի . . . և անուանէ յանուն իւր զլեառն Սիմ, և դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկն»։ Այստեղ պարզօրէն կորդուաց լեռներն են ակնարկուած, եթէ չասենք Մասիոս-Մասիսը։ Ապա Տարօնի գաւառը և Յրօնքը Սեմի որդի Գարբանի և Ջրհեղեղից յետոյ ցրուելու հետ կապելով՝ յարում է անմիջապէս. «Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեաց ի նուագս բամբուռն և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք»։ Քանի որ Տարօնում պիտի լինի Յրօնքը, ապա միայն մերձակայ բարձր Սիփան-Մասիսը կարող էր տապանի լեռը համարուել և ի հարկէ ըստ հայ ժողովրդական զրոյցի։ Բայց այդ չի հետաքրքրում Խորենացուն. «Եւ այսօքիկ զրոյցք սուտ և կամ թէ արդարեւ լեալք, մեզ չէ ինչ փոյթ»։ Այլ վասն զիտելոյ քեզ զամենայն որ ինչ ի լրոյ և որ ինչ ի գրոց անցանեմ ընդ բնաւն ի զիրս յայս»¹. և կարծես թէ ի լրոյ Ազատ Մասիոսն էլ չգիտէ։ Բայց մենք վերեւ արդէն տեսանք նորա հայեացքը Սիրիլոսի զրոյցի մասին, որ «Բազում ինչ ճշմարիտ է»։ ուստի Խորենացու վերջին վկայութիւնը մի ճարտասանական ձև է միայն, որով նա շատ անգամ զիմում է իւր մեկենասին պատմազրութեան ընթացքում։ Եւ թուում է, որ այդպիսով ուզում է ազատուել, եթէ ոչ հալածանքից, գոնեա եպերանքից ժամանակակիցների, որոնք ինչպէս և յետնորդները արհամարհել են այդ տեսակ զրոյցները և կամ թէ մեզ իբրև պատմութիւն են տւանդում, ինչպէս Բուզանդարանն ու Պատմութիւն Տարօնոյ մինչդեռ Խորենացին զիտակցաբար և պատմաբանի հմտութեամբ իւր միջոցներով ու ծանօթութիւններով մեր պատմութեան նախնական շրջանն է հիւսում։ Եւ եթէ մենք

1. Խորեն. Ա, 2, 15—18:

չենք կարող ըստ ամենայնի նորա տապանի լեռան լռութեան պատճառները բացատրել, չենք էլ կարող ասել, որ նա չգիտի, որովհետև տապանի լեռան անուն բնաւ չէ տալիս: Եւ միթէ նա կարող էր աստուածաշնչեան տապանի վէճը չիմանալ, երբ Հայոց մէջ յայտնի էր և մինչև իսկ Հերոնիմոսին էր հասել Հայոց ժողովրդական աւանդութիւնը Մասսի մասին, որ յամենայն դէպս Ե. դարում Ս. Գրքի թարգմանութեան միջոցին անյայտ չէր. իսկ եթէ նա Լ. կամ Ը. դարու մարդ է, ինչպէս պնդում են, ապա չէր կարող Մասսի աւանդութիւնը մի որ և է անյայտ Տիրանունի յայտնի լինել, իսկ նորա պէս մի պատմագրի ոչ: Եւ երբ նա Հայաստանի հարաւի զրոյցը՝ դէպքերն ու վայրերը, Աժդահակի զարմը, Մարաց աշխարհն և Մարակերտը հիւսիս Մասսի մօտ է փոխադրում, այդ դժուար թէ լինէր միայն Աժդահակի զարմի և Վիշապազունքի նոյնացումով: այլ և անպայման հայ մատենագրներից միմիայն նորան յայտնի Արարադ—ուր ինչպէս տեսանք Arardi լեռ ևս կայ—և Արարատ աշխարհների նորդուաց և Ազատ Մասեաց լեռների հետ կապուած նոյեան տապանի զրոյցների գոյութեամբ:

Եւ արդ եթէ այս բոլորից յետոյ տակաւին հնարաւոր է մի կերպ բացատրել Հռադամիզդ—Երուանդի և Տրդատ—Արտաշէսի հիւսիսում և հարաւում Խորենացուց և Թ. Արծրունուց պատմուած անցքերի տարբերութիւնները այս երկու պատմագրերից մէկի կամ միւսի մասնակի լռութեամբ և կամ Արտաշէսների յատկապէս Արտաշէսի և Տրդատ—Արտաշէսի գործերի շփոթութեամբ, դուրսէ և աշխարհագրական անուններից մէկ—երկու սի պատահական նմանութեամբ, բայց այդ դժուար է ըստ ամենայնի պնդել Աժդահակի զարմի վերաբերութեամբ: Եւ ի հարկէ ոչ մի հիմունք չունի Թ. Արծրունին, որ չկարողանալով իւր առաջ ունեցած պատմական աղբիւրները հմտութեամբ օգտաւոր ծել և անշուշտ չհամարձակուելով Խորենացու պէս մի դարերով դեռ մինչև մեր օրերը անպայման հեղինակութիւն վայելող պատմագրի աւանդութիւնից շեղուել, իւր սովորութեան համաձայն

աշխատում է սորա պատմուածքը հաշտեցնել իւր ունեցած մի այլ և տարբեր աղբիւրի տեղեկութեան հետ¹, Աժդահակի զարմը նախ և առաջ բնակեցնելով Խորենացու յիշած վայրերում՝ Արարատում և ապա Վասպուրականի Մեծ Աղբակ՝ և Կորճէից-Կորդուաց աշխարհի Փոքր Աղբակ գաւառում: Բայց որ Թ. Արծրունին հակասում է Խորենացուն, երբ որ ինքը Արտաշէս Բ-ի ժամանակ ևս Աժդահակի զարմը Վասպուրականում է գնում, իսկ Խորենացին Այրարատում, այդ նորա հոգսը չէ և երևի չի էլ նկատել:

1. Թ. Արծրունին Տիգրանի և Աժդահակի պատմութեան աղբիւրի մասին ասում է. «Որպէս ցուցանեն մեզ առաջինք ի պատմագրացն» (Ա, Ե, 36). իսկ Տրդատ-Արտաշէսի և Հաղպատի ճշմարտութիւնները համար՝ «Որպէս բացայայտեն գիրք պատմագրացն» (Ա, Ը, 52): Անտարակոյս Արծրունին ունեցել է իւր ժամանակին շատ աւելի պատմագիրներ, քան մենք այժմ ունենք, այդ երևում է նորա և այլ վկայութիւններից (Ա, Բ, 24 և ալ. Զ, 44. Ժ, 65. Ք, ա, 79, 80):— Զորոտրդ դարու որոշ շրջանի համար տուած պատմութեամբ օգտուում է Մ. Խորենացուց, որին և Մ. Քերթով է կոչում, այսպէս և Փ. Բիւզանդացուց, որին թէև մի անգամ յիշում է «Բիւզանդն պատմող» անուանելով, բայց շատ յետոյ (Գ, Բ, 275) և ոչ իւր օգտուած տեղում: Եւ իւր խելքով աշխատում է այդ երկուսի տարբերութիւնները կամ երբեմն կարծեցեալ հակասութիւնները համաձայնեցնել: Այսպէս Սմբատ սպարապետին նախ ըստ Խորենացու Բագրատունի է կոչում (Ա, Ժ, 66. Հմմտ. Խորեն. Գ, ԼԷ, 225—227), որպէս զի յաջորդ գլխում Մամիկոնեան կոչի (Ա, Ժ, 67. Հմմտ. Բուզ. Ե, ԽԳ, 261): Խորենացուն հետեւելով Մեհրուժանին է համարում Շապուհի փեսայ (Ա, Ժ, 62. Հմմտ. Խորեն. Գ, ԼԶ, 223). իսկ Վահան Մամիկոնեանի կնոջ Որմզդուխտի անունն անգամ չէ տալիս (Ա, Ժ, 65. ԺԱ, 68 Հմմտ. Բուզ. Գ, Ծ, 164. ԾԹ, 184):— Շատ հետաքրքրական է, որ ըստ Արծրունու Խոսրով Գ. -ի դահընկեցութիւնից յետոյ Շապուհը նշանակում է «զՎաղարժ զեղբայր Խոսրովու» (Ա, ԺԱ, 69. Հմմտ. Զաքարիա սարկաւազ, Պատմագր. Ա, Բ, 3. Վաղարշապտո 1870), որ պէտք է լինի Վահան շապուհը (Խորեն. Գ, Ծ, 241. Սերէոս Բ, 18. Գ, 22), որ Եղիշէի մի տպագրութեան մէջ ևս կոչուում է Ստահրշապուհ (Եղիշէի մատենագրութիւնք. Ա, 7, Վենետիկ 1859): Բայց թերևս այս Վաղարշն այն Տիգրանի եղբայր Արշակն է, որոնց հայրն ևս ըստ Պրոկոպիոսի Արշակ (=Գ.) էր կոչում, որի մասին բաւական խօսել ենք մեր Քաջանց տուն անտիպ երկասիրութեան մէջ:

Եւ որովհետեւ Աժգահակի զարմի բնակավայրի հետ է հասուած Հայաստանի Մարաց աշխարհը և Մարակերտը, որոնք ևս ինչպէս այս Դ. գլխի ա. մասում էլ ենթադրեցինք, հարաւում պիտի լինին. ուստի քննենք մեր միւս հեղինակների ցուցմունքներն ևս Մարաց աշխարհի մասին: Այս հաստատում է և Բուզանդարանի վկայութեամբ: Արշակ Բ-ից Դ. զարում ապստամբում են Աղձնիք, Նոր Շիրական, Մահկերտուն, Նիհորական և Դասնը, յետոյ Գուգարք, Չոր, Կողբ և Գարգմանաձոր. ապա Արձախ, Տմորիք, Կորդիք և Կորդուք և վերջապէս «Յետ այսորիկ ապստամբեաց ի Թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութիւնն՝ տանն Հայոց Թագաւորին, որ էր զատրպայական աշխարհաւն, յետս եկաց ի Թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց . . . և աշխարհն Կազրից. եթող . . . և գնաց . . . տէրն Անձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Մոփաց . . . : Միջնաշխարհն մնացեալքն յերկուացան յարքայէն, և ոչ կամէին լսել Թագաւորին իւրեանց»²:

Այս վկայութիւնից շատ սւտիկ է, որ Հայոց Թագաւորի ձեռին կամ ձեռական՝ իշխանութիւնը այստեղ կոչուել է ոչ թէ Այրարա ը, որ Միջնաշխարհի՝ մասն է, այլ Արշակ Բ-ի Եսպուհից ստացած «երկրորդական մեծ տունը» «Ատրպայական աշխարհ»ի շուրջը-մօտը, որ գուցէ և Խորենացուն մօլորեցնող խնդրի պատճառներից մինն է: Եւ թերևս Խորենացին ինկատի ունենալով՝ որ Բուզանդա-

1. Բնագրում «իշխանութեանն», որ թ²ի և թ⁶ե կրճատ պատուագրութիւնից է առաջանում: Հմմտ. Հ. Աճառեան, Ձեռագրական սրբագրութիւններ Փաւստոսի մէջ, էջ 138. Բարիկ 1907. հանումս Բանասերէն 1903—1906: Մի քանի սրբագրութիւններ ևս մենք ենք առաջարկել (Արարատ Ամս. 1903. փետրուար-մարտ 241—251. Վաղարշապատ):

2. Բուզ. Դ, Ծ, 163—164:

3. Բուզ. Դ, Ծ, 163: Գ, ԺԴ, 36. Դ, ԺԴ, 117: Հմմտ. Ազգաթանգ. ՀԵ, § 580, էջ 296, 16 «Ժողովուրդ ձեռական» Ձր. Ե ունի «տեղեկութիւն»:

4. Միջնաշխարհ-Մէջաշխարհ, Բուզ. Դ, ԻԴ, 147. Ե, Ա, 191, Դ, 196: Դ, ԻԱ, 140:

րանը երկիցս ևս ասում է «Երկրորդական մեծ տուն . . . յԱտրպատական աշխարհին»¹, որ վերևը «ձեռին» այսինքն սեփական իշխանութիւն կոչեց, և ապա՝ «Տունն թագաւորին Հայոց, որ յԱտրպատականին էր»², վկայութիւնները ուզել է հաշտեցնել վերոյիշեալ վկայութեան հետ, ուստի և Աժդահակի զարմը բնակեցնել է տալիս Երասխի ոչ միայն ձախ այլ և աջ, այսինքն Ատրպատականի, կողմը: Բայց Միջնաշխարհը ուրեմն և Արարատը, չի ապստամբել, այլ միայն երկուացել կամ տարակուսել, տատանուել է. ապա ուրեմն Մարաց աշխարհը չէր, որ ապստամբել էր. մանաւանդ որ այս երկուսն էլ նախ կողք կողքի իրրև զատ զատ աշխարհներ այս վկայութեան մէջ յիշուում են. և յետոյ էլ՝ երբ այս ապստամբուած աշխարհները նուաճուում են, առանձին առանձին են յիշուում «Տունն թագաւորին Հայոց, որ յԱտրպատականին» և «Մարաց կողմանքն»³:

Այն հանգամանքը որ Մարաց կողմանք կամ Մարաց աշխարհը նուաճուելուց յետոյ անմիջապէս յիշուում է Արձախը⁴, և Տրդատ Բագրատունին Տիրանից ապստամբելով զնում է նախ «ի կողմանս ամբութեան Մարաց» և ապա այստեղից հասնում է «Սիւնեաց աշխարհը»⁵, կարող էր զուցէ կարծել տալ, թէ այստեղ խօսքը Շարուրի մասին է: Բայց նախ Արշակի ժամանակ ապստամբած և յետոյ Պապի ժամանակ ընկճուած միևնոյն աշխարհների և գաւառների շարքը⁶ տարբեր է, ուստի այս հանգամանքի վրայ կարելի չէ ոչինչ ապահով հիմնել. և ընկճումը անպատճառ ապստամբութեան կարգով կատարուելու ոչ մի հիմունք չկար, քանի որ վերջինս համարեա թէ միաժամանակ է եղել: Ապամենք չգիտենք, թէ ո՞ր տեղից է զնում Տ. Բագրատունին: Եթէ նա Բագրատունեաց հայրենիք Սպեր և կամ Կոզովիտու Ծաղկոտն—Անզղ զաւարից զնալու լինէր Սիւնիք, կարելի էր ասել ի հարկէ «Մարաց կողմանքը» Շարուրն էր: Բայց

1. Բուդ. Դ, ԺԶ, 128:

2. Բուդ. Ե, Ը, 213:

3. Բուդ. Ե, Ը, 213. ԺԱ, 214:

4. Անդ. Ե, ԺԲ, 214:

5. Խորեն. Բ, ԿԳ, 141:

6. Բուդ. Ե, Ը—ԺԹ, 213—219:

Դ, Ծ, 163—104:

մենք գիտենք՝ որ հենց այս Տրդատի պապը՝ Սմբատ Բագրատունին, Տմորիք-Կորդիքում կալուածք ունէր, ուր յիշուած է յատկապէս Ալկին, այժմ էլի¹: Միաժամանակ գիտենք, որ Թ. դարում Բագրատունիք մինչև իսկ Մոկաց աշխարհի տէրն են դարձել. և արդեօք այս կողմերի Սպարկերտ գաւառը որ և է կապ չունի՞ Բագրատունեաց հայրենիք Սպեր գաւառի հետ²: Եւ ուրեմն Մարաց ամուր աշխարհը փնտռելու է Տմորիք և Կորդիքից հիւսիս և կամ հիւսիս արևելք, այդ կողմերից՝ հարաւից Սիւնիք գնալու համար: Այժմ ահա հասկանալի պիտի լինի, թէ ինչու Բուզանդարանը Կորդուաց, Կորդեաց և Տմորեաց գաւառների ընկճումից անմիջապէս յետոյ յիշում է «Մարացը» — «Մարաց կողմանքը» և յետոյ ևս Արձախը³, քանի որ Վասպուրականը, Միջնաշխարհի մաս Այրարատը և Սիւնիքը չէին ապստամբած:

Այս ենթադրութիւնն աւելի հաւանական է գառնում նոյն հեղինակի մի այլ վկայութեամբ ևս. «Եւ մինչ նա

1. Սորեն. Բ, ԾԳ, 132. Հմմտ. H. Hübschmann, Ortsnamen 337:

2. Թ. Արժրունու Գ, Բ, 127, 137 յիշած Մոկաց իշխան Սմբատ Բագրատունին ոչ թէ մի ուրիշ Սմբատ Բագրատունի է, այլ Աշոտ Ա.-ի հայր Մ. Սոսառլանոզը, ինչպէս Գաղբաշեանը, չնայելով որ չէ յիշում Բագրատունեաց կալուածք Ալկին, հապտակ Դ. Ալիշանի (Յուշիկը Հայրենեաց, Ա, ԺԶ, 432, Վեներակ 1869) արդում է (Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, III, 26. ծանօթ. 1. Berlin 1893): Արդեօք մի կապ ևս չկայ Բագրատունեաց հայրենիք Սպեր, Հերոզոսի Σάσπερος ու Բահնոֆոնի Εσπερίται գաւառի և Մոկսի Սպարկերտ, Սարարոնի Σουπρίτες-Տուպրիտէ գաւառների (Montzka, die Landschaften Gross-Armeniens bei griechischen und römischen Schriftstellern I, 1, 12—13. Wien 1906) անունների մէջ: Յայտնի է, որ Բագրատունիք Հայաստանի այլ մասերում ևս կալուածքներ ունէին: Անանունն ասում է. «Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին դժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այսինքն է Անգեղաուն»: Այստեղ Արշակին ընդատաջ է գնում Արեւնակի որդիներից Փառաղեան Բագրատը (Սերէոս, պպր. Ա, 6, 9): Մենք ուրիշ տեղ կը տեսնենք, որ Անանունը արեւմտեան Անգեղաունը շինթի է Անկղ-Ծաղկոտն գաւառի հետ:

3. Բուզ. Ե, Թ—ԺԲ, 214:

դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զատրպայական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից»։ Չպէտք է մոռանալ որ Վարդանանց պատերազմին ևս Հեր և Զարեանդի կողմերից են զգուշանում Հայերը, իսկ Արշակի ժամանակ Գանձակը, այն է Թախտի-Սուլէյմանը, Ուրմիոյ ծովից հարաւ արևելք, Հայաստանին էր պատկանում։ Բայց ահա Պարսիկները Մերուժանի առաջնորդութեամբ մտնում են արևմտեան Հայաստան և աւերում և զուժկան է հասնում Արշակին. «Դ՛ն աւաղիկ... նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս»։ Իսկոյն «Վասակ սպարապետն... յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ՝ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղուջ ուրեմն յերկրին Մարաց...։ Եւ ինքն զայր հասանէր ի Միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրարատեան» և այն¹։ Ակներև է, որ Մարաց ամուր երկիրն Այրարատում չէր, այլ Ատրպատականից արևմուտք. Ուրմիոյ ծովից ոչ շատ հեռու հաւանօրէն դէպի արևելք, Կորդուքից և Մահերտունից դէպի արևելք, ինչպէս յիշատակում է Ագաթանգեղոսը։

Միևնոյնը հետևում է և Հռիփսիմեանց պատմութիւնից։ Հռիփսիմեան կոյսերը Հռովմից փախչում են Պաղեստին. «Ապա... հրաման առեալ զնալ ի Հայք յերկիրն արարատեան» անցնում են Եդեսիա, ոմանք այստեղ մնալով և ոմանք Դարանաղիք զնալով, միւսները «Գնացեալ եկին ի Բղնունեաց գաւառ, ի քաղաքն Խլաթ... և անտի... ի գաւառն Մոկաց, Սուրբ Խաչ կոչեցեալ տեղի... Կճաւն կոչեցեալ տեղի՝ զիւաց լցեալ պաշտմամբ... յորում զայրագնեալ զիւացն... խեղէին, ծռէին, պնշատէին զպաշտօնեայս... վասն որոյ տեղին կոչեցաւ Կճաւ²...։ Եւ

1. Բուզ. Դ, ԻԴ, 145—147։

2. Կճաւ յատուկ անուն մեզ յայտնի չէ։ Եւ եթէ ի նկատի առնենք այս ժողովրդական բացատրութիւնը, գուցէ պէտք է լինի Կճաւ. որովհետև Իզդիրում այդպէս կոչուում են կարճ քիթ ունեցողները, որ միևնոյնն է թէ պնշաւ, որ այս վկայութեան մէջ ևս գործ է ածուած։

գնացեալ ընդ մէջ Կորդուաց ընդ լեառն Սողոմ . . . և անտի ի կողմն Տմորեաց . . . և անտի . . . ելանեն ի Հայաստան գաւառ ի խորին խորշ Մշկունեաց . . . և շուեալ . . . յեզր Բժունեաց . . . և անտի փոխեալ բնակեցան յայնկոյս դետոյն մօտ ի յակն . . . որ անուանի տեղին Սուրբ Տիկին: Եւ անտի յառաջ անցեալ ուստի հոսի գետն բովանդակ . . . ի լերանց Կանգուարայ, որ կոչի Ազուաւքար¹ . . . Տիգրիս, հասին ի տեղի մի . . . և գնացին ի գլուխ լերինն Պաղատոյ, . . . տուն Արամազդայ և Աստղկայ . . . և անտի յարեգական կոյս սակաւ մի առ ի կողմն հարաւոյ ի կատար լերինն . . . որ կոչի տեղին Բութ . . . : Եւ յայրս քարին որջացեալք կային վիշապք, դիւացեալք և սևացեալք . . . զուարճացեալ դէին և բազնօքն . . . Եւ ի մէջ խորածորոյն օձք և կարիճք լի թիւնաւոր մահարերին² լցեալք . . . օձք մարմնաւորք քարացեալ կան մինչև յայսօր: Եւ ի բազնացն փախուցեալք դէքն անկանէին յերկիրն Մարաց³: Մի կողմ թողնելով այն խնդիրը, որ մի գուցէ այս օձերի ու վիշապների և դէերի աւանդութիւնն ևս, որտեղ, ինչպէս արդէն գիտենք, յիշատակուում է և նոյեան տապանի ասորական՝ Կորդուաց լեռան աւանդութիւնը, նոյնպէս նպատաճ լինի խորենացուն Ամգահակի զարմը Մասսի շուրջը փոխադրելու, շեշտենք որ ընդգծուած ծանօթ աշխարհագրական անունները նոյնպէս ցոյց են տալիս, որ «Մարաց երկիրը» Հայաստանի հարաւարեկեան կողմն է ընկնում, ինչպէս երևեց և Բուզանդարանից և Ազաթանգեղոսից:

1. Խորենացուն վերագրուած «Պատասխանի թղթոյն Սահակայ Արծրունու» տարրերութիւններ ունի: Բարթուղիմէոս ասաքեալը Տիրամօր՝ Աստուածամհնի պատկերը բերում է Հայաստան: «Եւ եկեալ յաթխաբիս Անձաւացեաց ի համբաւ քարի միոջ, քանզի դէք բազումք բնակեալ էին անդ . . . կռանածայնս դարբնաց . . . Եւ տեղին այն յորում դէքն էին . . . ի վերայ գետոյն մեծի՝ որ կոչի Տիգրիս, հուպ ի բերդն ամուր . . . Կանգուար, և միւսոյն Ազուաւք քար» (Խորեն. էջ 294—295):

2. Չկայ բառարաններում, գուցէ «մահարեր էին»:

3. Խորեն. 299—302:

Վերջապէս Կորիւնի «Մարաց կողմանքն» ևս մեր Մարաց գաւառը պէտք է հասկանալ: Սա ասում է Մաշտոցը—Մեսրոպը Հայոց արքունիքից հեռանալով՝ գնում է Կողթն քարոզելու, որտեղից «Իիւացն փախստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց»¹: Յետոյ պատմում է, որ Մաշտոցը գրերի գիւտի համար գնալով «ի կողմանս Արամի» ասորւոց երկու՝ Եգեսիա և Ամիգ քաղաքները՝ ապա Սամուսատ և վերադարձաւ նոր քաղաք՝ Վաղարշապատ, աւելացնում է. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժաղուժ կողմանս Մարաց, որք ոչ միայն վասն ղիւտիսն աստանայական բարուցն ճիւղաղութեան, այլ և վասն խեցրեկաւոյն և խոշորագոյն լեզուին՝ զժուարամատոյցք էին, առ ի յարդարել և զնոցա հարուստ ամացն [=հարանցամոյն ըստ Գալուստ Տէր-Մկրտչեանի] ծնունդս»²:

Այս երկու վկայութեանց «Մարաց կողմանք»ը չէր կարող լինել ոչ Մեծ Մարաստանը և ոչ էլ Փոքր Մարաստան՝ Ատրպատականը, ինչպիսի առաջին վկայութեան համար հասկացել է Օրբէլեանը: Ստանանեանները ձգտելով Հայաստանում քրիստոնէութիւնը ջնջել, չէին կարող թողնել որ Մեսրոպն անարգել քարոզէր իրենց տիրապետութեան սահմաններում: Բայց այդ կարող էր լինել Հայաստանի հետ դարերով կապուած Բուզանդարանի «Մարաց ամուր աշխարհը», որ նա կոչում է և «կողմանք Մարաց» ինչպէս տեսանք, որ և անշուշտ Ագաթանգեղոսի յիշատակածն է, ուր և քարոզել էր Գ. Լուսաւորիչը ըստ Ագաթանգեղոսի: Բայց և այնպէս ցարգ եւրոպացի և հայ գիտնականներն այդ համարել են ճարտարը իւր շրջակայքով, այսինքն Հայոց Վիշապազանց կամ Խորենացու Աժգահակի զարմ՝ Մարաց երկիրը: Սակայն եթէ ի նկատի առնենք, որ ղեկերը Գ. Լուսաւորչի Հայաստանում քարոզած ժամանակ ևս փախան Կաւկաս և Խաղտիք իբրև հեթանոս երկիրներ, և

1. Կորիւն, Պատմ. Ս. Մեսրոպայ, էջ 15—16. Վենետիկ 1894:

2. Կորիւն, Պատմ. էջ 21:

«սատանայական ու դիւամոլ» կոչուում են և Աղուանները ¹, չը նայելով որ Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիսը արգէն մի անգամ քարոզել էր ² նոցա. այն ժամանակ եթէ Կորիւնի ա. վկայութիւնն նոյն իսկ ըստ Օրբելեանի Ատրպատականն ընդունենք, երկրորդը ոչ մի կերպ կարելի չէ ոչ Ատրպատականը և ոչ Շարուրը: Եւ միթէ Հնարաւօր է ենթադրել, թէ Հայրապետական աթոռանիստ Վաղարշապատի և Արտաշատի քթի տակ ապրող մի ժողովուրդ Մաշտոցի ժամանակ տակաւին հեթանոս մնացած լինէր. մանաւանդ այլուպէս անհասկանալի ևս կը մնար, թէ ինչո՞ւ Մեսրոպ-Մաշտոցը Վաղարշապատից Գողթան դաւաճը Շարուրոյ տնցնելիս — միակ և ուղիղ ճանապարհը — հեթանոս Մարերին նախ մի կողմ է թողնում, որպէս զի յետոյ և այն էլ թագաւորից հրաման առնելով միայն՝ զնայ այդ խուժապուժ կողմերը քարոզելու:

Ինտելու է և այն դերը, որ Մաշտոցն ըստանձնել է: Ա. Գրքի թարգմանութիւնից յետոյ, ասում է Կորիւնը՝ «Առնոյր հաւանութիւն երանելին Մաշտոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կայենականսն՝ և նա ի սփիւռս հեթանոսաց

1. Աղուանից թագաւոր Արաւաղէնը («Որում Արաւաղ էր անուն»): Միս. օրին. «Արաւաղէ» Կորիւն, 30:—Արաւաղէն Սորեն. Գ, ԾԳ, 248] «Հրաման տայր, սասանայական և դիւամոլ ազգին... հնապանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի» (Կորիւն, 31):

2. Բուզ. Գ, 2, 13—15. Հմմտ. Սորենացի, Գ, Գ, 188—189:

3. Նախ՝ ով է Տէր եպիսկոպոսը: Արդեօք Մահակ Պարթևը, որին ընդարձակ Կորիւնը կոչում է Սուրբ 17. 18, 32. երանելի 23, 33. կաթուղիկոս 26, և սուրբ եպիսկոպոսն՝ Մահակ 30. թէ Մեսրոպի աշակերտ Տէր Սոբձենացին (Սորեն. Գ, ԾԳ, 248. Ղ. Փարպ. Ժ, 15): Խնդիրը դժուարանում է քանի որ Կորիւնն այս վկայութեան անմիջապէս յարում է. «Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ այլովէն ևս օգնականօքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական դաւառէն». այնպէս որ Կորիւնի համար տարբեր են Տէր և Տիրայր. մինչդեռ վերջին անունը Փարպեցին և Սորենացին չունին և նոցա համար «ի Սորձենոյ» կամ «Սորձենացի» է ոչ թէ Տիրայրը, լինչպէս Կորիւնն է ասում, այլ Տէրը: Եթէ Կորիւնի այդ տեղը խանդարուած չէ և յաջորդներինն է իրաւունքը, ապա աւելի ևս կարելի է պնդել, որ «Կայենական» ը չէ կարելի ուղղել «Կամենական»

զըանս կենաց սերմանիցեն»¹: Եւ ահա իջնում է կրկին Գողթն, «սահմանակից» Միւնիք, յետոյ և Վրաստան: Ապա խորհուրդ անելով «Վասն կէս ազգին Հայոց»², որ էր ընդ իշխանութեամբ... Հոռոմոց»³ անցնում է արեւմուտք և վերադառնալով գնում է Աղուանք, «Բաղասական կողմերը» և Գարդմանաձորի հանդէպ անցնում է կրկին Վրաստան ևն: Այսպիսով կարծես Կորիւնն ուզում է ցոյց տուած լինել, որ նա քարոզել է համարեա այն բոլոր սահմաններում, որ Գ. Լուսաւորչի համար ընդգծում է Ազաթանգեղոսը: Այնպէս որ մնում էր հարաւարեւելեան սահմանը «Մարաց կողմանքը», որի համար Մաշտոցը թագաւորից հրաման է առնում: Խնդիր կարող է ծագել միայն, թէ այդ միջոցին Հայաստանի հարաւարեւելեան սահմաններն այդքան հեռու տարածւում էին. բայց այս անհրաժեշտ էլ չէր. անշուշտ մի որ և է, գոնեա նախնական, կապ կար Հայաստանի և Մարաց կողմանքի մէջ: Բացի այդ մենք տեսանք, որ Մաշտոցը զնաց և Վրաստան և Աղուանք, թէև այս երկիրները անկախ էին և ուրոյն թագաւորներ ունէին:

(Հ. Աճառեան, Արարատ Ամս. 1911, էջ 229), որ մի անգամ միայն պատահում է Բուզանդարանում և տեղն անյայտ է, մինչդեռ Կայան բերդ. ձոր և աշխարհ տես Յովհաննէս կաթուղ. (Պատմ. ԾԹ, 381. Կ, 387. Երուսաղէմ) ապա և Կ. Գանձակեցի, Վարդան Պատմագիր ևլն: Եւ այս այնքան աւելի հաւանական է, որ Տէր Խորձենացին բառ Խորենացու մնաց Վրաստան, որ սահմանակից է Կայենոյ կամ Կորիւնի Կայենական աշխարհին:

1. Կորիւն, Պատմ. 24:

2. Կորիւնն էջ 28. այս դարձուածքն ունի երկու անգամ ևս, «Վասն մանկաոյն յաշակերտութիւն, առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ» և «Ի գաւառս կէս ազգին Հայոց՝ ի իշխանութեան կայսեր» (էջ 28): Արդեօք այժմեան Կէսկէսները ինչպէս և իրենց անունը այդ ժամանակից չեն ծագում, որոնք այժմ էլ ապրում են միմիայն և. դարում Բուզանդացոց—Հոռոմոց պատկանող Հայոց երկրներում Այնթապում և Համշէնում (Ղ. Ինճիճեան, Աշխարհադր. Ասիա, Ա. էջ 377. 396. Վենետիկ 1806): Հոռոմկլայի Խալիֆին—Խալիֆէթի հիւսիսային արևելեան կողմում ևս կայ «Ճիպիեր, հայ Կեսկիսիներու գիւղը, ս. Նիկողայոս եկեղեցիով» (Բարգէն ծ. վ. Կիւլէսէրեան, Ծովք-Տուրք և Հոռոմ-Կլայ, էջ 84. Վիեննա 1904):

Մեր ուշադրութիւնից թող չվրիպի և այն, որ Կորինթի վերջին վկայութիւնից երևում է, թէ իւր վիշատակած Մարերը օտարախօս ժողովուրդ էին. ինչպէս որ Խորենացին նոյնանման բառերով որակում է «կոկորդախօս, աղ-խազուր, խժական և խեցբեկազոյն . . . Գարգարացւոց լեզուն»¹, այն է աղուաներէնը¹, որ հաստատուում է ոչ միայն և Կորինթի, այլ և Խորենացու և մի այլ վկայութեամբ, որով Աղուանք ցեղը և Սիսական գունդն ևս միևնոյնն են համարուած²: Արդ ըստ Խորենացու կողմնակալներ էին կարգւում Հայաստանի սահմաններում, որտեղ արդէն հայերէնը վերջանում էր և սկսւում էին օտարախօս ժողովուրդներ: Այսպէս Վաղարշակը Բագրատ Բագրատունուն կարգում է «ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ բիւրուց և հազարաց յարեմտից կուսէ»³. «Եւ յարեւելից կողմանէ զեզերք հայկական խօսից կողմնակալս, զերկուցեղից նահապետութեանցն՝ Սիսական և Կաղմեայն . . . : Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն զայր անուանի . . . զԱռան»⁴, որ Աղուանից նախահայրն է համարւում: Ինչպէս կարող էր ուրեմն Հայաստանի ծոցում, Միջնաշխարհի մաս Այրարատում, Մաշտոցի ժամանակ օտարախօս ժողովուրդ լինել. երբ դեռ Ստրաբոնը Արտաշիասի և Զարիադրէս-Զարեհի նուաճած Հայաստանի արեւմտեան գաւառները կարին, Գերջան, Եկեղեաց գաւառները և «զամենայն կողմն Անտիտաւրոսի» համարում է «համալեզու»⁵: Եւ եթէ Մասիսի ստորոտներում և Շարուրում լինէր Ե. դարում Մաշտոցի ժամանակ մի մարախօս ժողովուրդ, ինչպէս կարելի է, որ Խորենացին, թէկուզ է. — Բ. դարում ապրէր, հետքեր չգտնէր և այլ ևս պատէպատ չընկնէր ապացուցանելու, թէ վիշապազունք Աժդահակի դարմ են և Մուրացան նախա-

1. Խորեն. Գ, ԺԳ, 248 Հմմտ. Գորիւն, 29 «Բննեալ զբարբառս զբանս Աղուաներէն լեզուին»:

2. Խորեն. Բ, Ը, 77—78:

3. Անդ, Բ, Գ, 72:

4. Անդ, Բ, Ը, 77:

5. Ստրաբոն ԺԱ, 14, 5 առ Ա. Մ.

Գարագաշեան, Քննակ. Հայոց Պատմ. Բ, Թ, § 14, էջ 159.

բարութիւնն էլ մարացի են. որովհետեւ բաւական էր միայն, որ նոքա մարտիսօս լինէին:

Բացի այդ մտանալու չէ, որ Կաղմեանք, որոնք վերեւում ըստ Խորենացու վերևի վկայութեան Միսական ցեղի հետ արևելեան կողմնակալ նշանակուեցան, նորա մի այլ վկայութեամբ հարաւային՝ Ասորեստանի կողմում, այսինքն հարաւորեւելքում են: Արամը «զարևելեայնն և զհարաւայինն նուաճեալ» ի ձեռն յանձնեալ էր երկուց ցեղից այսոցիկ, Միսակեանցն զարևելս, և որք ի Կարղմեայ տանէն՝ զԱսորեստանին»¹. Իսկ Կաղմոսի տունը Արարադայ երկրումն էր², որ ըստ Ք. Պատկանեանի, ինչպէս զիտենք՝ Հայաստանի հարաւարևելքումն էր, Վանայ և Ռամիոյ լճերի միջև: Այստեղ են ընկնում և Հայոց խեցրեկագոյն և խոշորագոյն լեզու ունեցող խուժադուժ Մարերը, հաւանօրէն այժմեան քուրդերը, որոնք տակաւին այնտեղ խոշոր մեծամասնութիւն են կազմում, որ և ընկնում է Ք. Կուսաւորչի քարոզութեան սահմաններում. «Եւ... քերէր առ սահմանօքն Ասորւոց առ նոր Շիրական»³ երկրան և առ Կորդուօք մինչև յամուրն աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքր-տան իշխանին մինչև յԱտրպատական», ասում է Ազաթանդեղոսը:

Յուսարազի Հոովմայեցի պատմագիրներ ևս զալին են միևնոյնը վաւերացնելու: Եւտրոպիոս և Սուլթոս Ֆեստոս, շորորդ դարի հեղինակներ, պատմում են, որ Տրայիանոս Կայսրը 115 թուականին եգեսիայից Ադիաբենա անցնելուց

1. Խորեն. Ա, ԺԳ, 32:

2. Անդ, Ա, 22. ԺԱ, 23:

3. Ղ. Ինճիճեանն ասում է. «Նուշիրվան: Գիւղ յարևելեան կողմն Տիգրիսի ի սահմանին Ճեգիրէի բնակեալ յԱսորւոց կամ ի Ֆակոբեանց: Թեբես այս սահման է, որ առ Ազաթանգեղոսի նստն իրակուն անուամբ յորջորջի» (Աշխարհագր. Ասիա, Ա, էջ 352): Եւ արդեօք Ղ. Ինճիճեանի յիշած Նուշիրվանը չէ՞ Մուսուլի վիլայէթի և համանուն սանջակի հիւսիսային արևելեան ծայրին գտնուած Զիրար կազան, որ ունի մի միայն մի ցամախ Շիրվան անունով: V. Guinet ասում է. «Zibar, comme Chirvân, est un nom qui s'applique en général à tous les villages de ce gaza; c'est un nom de pays» (Turquie d'Asie, II, 838. և քարտէզը. Paris 1892):

յետոյ՝ ընկճեց Կորդուացւոց և Marcomedi-ներին Հայաստանի ու Մարաստանի սահմանում¹: Այդ ի հարկէ մի որոշ աշխարհի և ժողովրդի անուն է, որ վերոյիշեալ հեղինակները յիշատակում են այլ աշխարհների հետ միասին: Ա. Գուլթշմիդը ծանօթութեան մէջ բացատրում է. «Marcomedi sind «die Meder, welche March beissen», dies ist der armenische Plural von Mar, der Meder». այսինքն «Մարկոմէդներ են «Մեդացիք, որոնք կոչւում են Մարք, որ հայերէն յոգնակին է Մար, Մեդացի անուան»: Սակայն Գուլթշմիդի այս խօսքերից չի պարզւում, թէ ո՞վ են այդ Մարկոմէդները և ինչո՞ւ են միաժամանակ հայերէն Մարք յոգնակի և օտար և Մէդ բառերից կազմուած մի անունով կոչւում: Գուցէ սա նոյնն է ուզում ասել, ինչ որ Ա. Մ. Գարադաշեանը, որ կարծես թէ մօտենում է մեր խընդրին, բացատրելով Ռուֆոսի Marcomedi-ն՝ «Մարք Հայոց»², որ անշուշտ մի առանձին ժողովուրդ էր տարբեր մեդացիներից, այլապէս այդ պատմագիրները չէին կոչիլ Marcomedi, այլ սոսկ Medi: Բայց որ այդ ժողովուրդը որ և է կապուներ Հայոց հետ, այդ ցոյց է տալիս հայերէն անուան սկզբի Մարք յոգնականը: Միթէ կարո՞ղ է այլ ևս տարակոյս ծագել, թէ այդ Հայոց Մարերն էին, որոնց բնակավայրը հայ պատմագիրները կոչում են «Մարաց ամուր աշխարհ, երկիր, կողմանք և գաւառ» անուաններով: Ինչպէս փոքր Ասիայում Gallograec-ները Գալլերից և Յոյներից խառնուած մի ժողովուրդ էին կազմել, այսպէս էլ անշուշտ Մարերը խառնուել էին Հայոց հետ, բայց տակաւին չէին ձուլուել, ինչպէս մի ժամանակ Armenocholyb-ները. և ոչ միայն Գ. դարում, երբ օտարներն էլ յիշում են, այլ և Մեսրոպ-Մաշտոցի ժամանակ. ուստի հասկանալի է, որ Կորիւնը «Մարաց կողմանքը» կոչում է «խուժադուժ», բարձր՝ «դիւական սատանայական» և լեզուն «խեցբեկազոյն և խոշորազոյն»²:

1. Alfred v. Gutshmid, Geschichte Irans, II, 143. Tübingen 1888:

2. Այժմեան քուրդերի մարական ծագումը թէ ըստ Հայոց.

Աննշան շէր ի հարկէ այս երկիրը՝ որովհետև յիշուում է Տրայիանոսի տիրապետած Աղուանք, Վիրք, Կողքիս, Ուռհայաստան, Արարիա և այլ երկրներ շարքում և Կորդուաց կողքին: Վերջին անունն արդէն որոշում է Մարաց գաւառի զիրքը և տարածութիւնը: Եւ Ա. Գութշմիզը ճիշտ է որոշում այդ երբ համարում է Մարաստանի արեւմտեան կողմի երկու երկիրները յայտնելով, թէ «Arrapachitis և Kalachene անշուշտ այն գաւառներն են, որտեղ Տրայիանոսի ժամանակ յիշուում են Մարկոմեդերը»¹: Արդ այս երկրներից առաջինը մեր Աղբակ գաւառն² է, որ անունով երկուսը կան հարաւային Հայաստանում: Մեծը Վասպուրականում և փոքրը Կորճէից-Կորդուաց աշխարհում³. Իսկ երրորդն է անշուշտ Ասորեստանի հնագոյն մայրաքաղաք Կալախին⁴ Մեծ կամ Վերին Չաւի զեաւբերանին, ի հարկէ իւր շրջապատի երկրով՝ նահանգով ուրեմն երկու Աղբակից և Կորճէից-Կորդուաց աշխարհից հարաւ⁵: Արդեօք այդքան հեռու տարածում էին Մարկոմեդերը, զժուար է պնդել, սակայն յետոյ կը տեսնուի:

յետագայ աւանդութեան և թէ ըստ եւրոպացի զիտնականներից ոմանց մենք զիտենք արդէն: Հետաքրքրական է, որ Կորիւնի «Մարաց կողմանց» լեզուին տուած մակդիրները յարմարում են և այժմեան քուրդերի լեզուին, որոնք գոտում գոչումով են խօսում. այլ և այն որ Սուրմալուայ Հայերը թէ դե-սաստանաներին և թէ դիւսպաշտ համարուած եղդի-քուրդերին հաւասարապէս քեռիներ են կոչում:

1. Gechichte Irans, II, 155.

2. H. Kiepert, Lehrbuch der Alten Geographie, VI, §81, ծանօթ. 2. Berlin 1878.

3. H. Hübschmann, Ortsnamen.

4. H. Kiepert, VII, § 139, էջ 151:

5. Կորճայք անուան ծագման մասին Հ. Հիւրշմանն ասում է. «Կորճէք առաջ մեկնուած *Kord-haik քուրդ-հայեր. նորերս Անդրէասը համարում է *Kurti-aik-ն ամանցւած *Curti= յունարէն Κόρτιο անունից: Ես համարում եմ երկու մեկնութիւններն ես սխալ» (Ortsnamen, III, VI, 259): Եւ Կորճէից լեզուն որ Ը. դարում յիշում է իբրև հայոց եգեթական լեզուի բարբառների վեր-

որ անհիմն չէ Գութշմիդի պէս մի քաջ արևելեան ազգերի պատմութեան մասնագէտ պատմաբանի կարծիքը: Այսօր քանի հաւաստի է սակայն, որ Հայոց Մարք, Մարաց գաւառը շատ աւելի ընդարձակ երկիր էր. քան Շարուրը իւր շրջապատով:

Արդ Կորճայք-Կորդուաց աշխարհից դէպի արևելք, այժմեան Գեաւառ և Շեմղինեան գաւառներից հարաւարևելք և Ուրմիոյ քաղաքից հարաւարևմուտք գտնուում է լեռնային Մարգեաւառը—այժմ ամբողջապէս քրդաբնակ ինչպէս Հայաստանի հարաւային և յատկապէս այդ կողմերի մեծ մասը—որ կոչուում է և Մէրգաւէր, Ուշնուից հիւսիս, որից բաժանուում է Դաշտ-ի-բէլ լեռնատափով¹: Ահա այս Մարգեաւառը պիտի լինի օտարների Marcomedi և հայ հեղինակների Մարաց գաւառը, անշուշտ ոչ նախկին ընդարձակութեամբ, բայց որ պահել է անունը. ճիշտ այսպէս Դարբնաքարն է Դարբնաց քարը և Ագռաւաքարն էլ Ագռաւաց քարը²: Եւ որովհետև Հայոց Մարերը աւանդութեամբ կապուում են Աժդահակի զարմի հետ, և Թ. Արծրունին պատմելով «Աժդահակի ազգից» Անուշի և սորա մօր Զայլմարի մասին ասում է, թէ վերջինս բնակուում էր Փոքր Աղբակի Զլմար և Որինգ ամրոցներում, ուստի Մարաց աշխարհը պէտք է տարածուած լինէր այժմեան Մարգեաւառից արևմուտք. որովհետև Սրինգն է ըստ Հոֆմանի հաւանական ենթադրութեան Gala dh Seringa-ն, Իխի և Զելուի միջև, Իերրիկ լեռան մօտ և ըստ Ալիշանի Զուլամերկից հիւսիս գտնուած Արար-գաղից հարաւ. իսկ

Ղինը, որ Հիւրշմանն սկզբում հայերէն չէ համարել (Armen. Gramm. 518—120. Leipzig 1895), յետոյ տատանուել է և անորոշ է թողնում (Ortsnamen, II, 238—239): Մեզ թուում է, որ Աղուանից և հենց Սութեցոյ օրինակը ցոյց է տալիս, որ այս ժողովուրդներն օտար լինելով իրենց ուրոյն լեզուն ունէին ի հարկէ, բայց վերջովէրջոյ դարձան հայախօս. և Կորճայքը գուցէ արդէն Ը. դարում հայախօս էր:

1. Ritter, Erdkunde, IX, 932. Տես և ցանկը:

2. Խորեն. էջ 294—295. 301:

Ձլմարն է Ձուլամար-Ձուլամերկ-Ձուլամերկեր¹: Միւս կողմից Մարգեաւառը բաւ Հոֆմանի ևս կարծես աւելի հարաւ է գտնուում երբ ասում է. «Խոյ սանջակից² վերև... անցնում է Ձաւը մի լեռնաշղթայի կրճով... դեպի ձախափին է Մերգէ գաւառը, որ Ձիհաննուման կոչում է Մարգաւա , այնտեղ ուր կուրկուրի Մերգա լեռնաշղթան հարաւարեւելքից ձգուելով անցնում է Ձաւը»³: Եւ որովհետեւ Խոյ-սանջակից վերև գտնուում է Քանդիլ-կուհ կամ Քանդիլ-գաղ լեռը—որի շղթան այսօր բաժանում է Պարսից և Օսմանեցւոց սահմանը հիւսիսից հարաւ Քելիսիփան և Քելիշին անցքերով, յայտնի ուրարտեան սեպագիր արձանագրութիւններով—և որն ըստ Հոֆմանի հին Ձարասպ լեռն է⁴. ուստի և այս պիտի լինի Մարաց գաւառի հարաւային սահմանը, ուր ցոյց տուեց և Գութշմիդը: Եւ ի զուր չէ, որ Հայոց աւանդութիւնն էլ այդ է ցոյց տալիս: Խորենացին այդ կողմերը նախ կոչում է «եղերք սահմանացն Հայոց», որոնց տիրել էր Մարաց նիւքար Մարէսը, որին մեր Արամը յաղթելով՝ «Եւ զաշխարհն նորա մինչև ցլեառն Ձարասպ ի ծառայութիւն [ի ծառայութեան] հարկի կալաւ»⁵:

Բայց որ մեր Մարաց աշխարհը Ձարասպից էլ արեւելք պիտի տարածուած լինէր, այդ երևում է ոչ միայն այժմեան Մարգեաւառի դիրքից, այլ և մի հին վկայութիւնից ևս, որով Ագաթանդեղոսի պէս Հայաստանի սահմաններն են որոշւում: «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Սրշակ զորդի իւր զՍրշակ փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհին Հայոց ի Մծրին քաղաքի: Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուաստան առ երկրաւն Տաճկաց և առ երկրաւն

1. Hübschmann, Ortsnamen, 335—336:

2. Այս Խոյը Տաճկաստանում է, որ չպէտք է շիթթել Որմիւրջ հիւսիսային արեւելեան կողմը Պարսկաստանում դոնուած Խոյ քաղաքի հետ:

3. G. Hoffmann, Auszüge, Excuse § 18, էջ 261:

4. Անդ, Excuse, § 16, էջ 231—250. Հմմտ. § 18, էջ 253—267:

5. Խորեն. Ա, ԺԳ, 30: Հմմտ. Աերէոս Ա, Գ, 37:

Ասորւոց և զկապուտկեայ առ Կիւղիկեաւ . . . և ցհիւսի-
սոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս
արևելից և անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխար-
հուն Մարաց. և հասանէ ի լեառն Զարասպ. և անցանէ
առ Նոր Շիրակ երկրաւն»¹, որ Ասորեստանի սահմանն էր²:

Այս վկայութիւնը կարևոր է և մի այլ տեսակէտով,
այն է Հայաստանի հարաւային կամ հարաւային արևելեան
սահմանի երկրների վերաբերութեամբ: Ազաթանգեղոսը Կ.
Լուսաւորչի քարոզութեան սահմաններն, ինչպէս յաճախ
յիշեցինք) այսպէս է որոշում. «Եւ յԱմդապոց քաղաքէն
մինչև առ Մծրին . . . քերէր առ սահմանօրն Ասորւոց առ
Նոր Շիրական երկրաւն և առ Կորդուօք, մինչև յամուր
աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքըր-տան իշխա-
նին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետա-
րանութիւնն իւր»: Մինչդեռ Սերէոսի որոշումներն առ-
հասարակ խոշոր գծերով են, Ազաթանգեղոսինը սակաւ ինչ
մանրամասն է: Մեր խնդրի վերաբերութեամբ աչքի է ընկ-
նում, որ Ազաթանգեղոսն ունի Կորդուօք և Մարաց ամուր
աշխարհի ու Ատրպատականի միջև Մահքըր-տուն, մինչդեռ
Սերէոսը այդ երկուսն էլ չունի: Եթէ Սերէոսը չէ յիշում
և Ատրպատականը, այդ անշուշտ պէտք է հասկանալ. «ընդ
կողմանս արևելից» բառերի տակ, մանաւանդ որ Ատրպա-
տականի սահմանն անորոշ և յաճախ փոփոխական է եղել,
ինչպէս մեր ցարգ ասածներից էլ ընթերցողը եզրակացրած
կրկինի մնում է, որ Կորդուօքն էլ մանաւանդ Մահքըր-տունը
հասկանալ «Մարաց ամուր աշխարհի» և կամ Նոր Շիրա-
կանի հետ, գոնեա Գ. դարում. այսպէս էր ըստ Բուզան-
դարանի Մահկեր տունը: Սա պատմելով Արշակից ապրս-
տամբած դաւառների մասին՝ թուում է. «Նախ րղնաշխն
Աղձնեաց, և Նոր Շիրական րղնաշխն, և Մահկեր տանն,
և Նիհորականն և Դասընտրէին»³ = Դասն: Եւ մեր այս կար-
ծիքն այնքան աւելի հաւանական է, որ յետոյ նոյն ապստամ-

1. Սերէոս, Ա., էջ 9. Հմմտ. Գ., գ, 37: 111 2. Անդ, Գ. Ի 2, 94:

3. Բուզ. Դ, Ծ, 163:

բաժ զաւառների նուաճման ժամանակ յիշուում է միայն նոր Շիրականը¹, բայց ոչ Մահկեր տունը և ոչ էլ հետեւեալ երկուսը²:

Արդ Ազաթանգեղոսի Մահքր-տունը և Բուզանգարանի Մահկեր-տունը միենոյնն են, որ Մարքուարտն ուղղում է Մահկերա-տուն, յարելով՝ որ այդ է Հեղայջար-Արբելա թեմի Beth-Mahquert վիճակը և աւելացնելով՝ որ վերջինս «Յայտնապէս համապատասխանում է Մասուղի Kit. attan-bih ԱԳ, 2. Murug III, 254 Adarbaigan-Ատրպատականում յիշուած Majrdan-Մաջրդան քուրդ ցեղի երկրին... որի դիրքը որոշուում է իւր արուարձան al-Kinkiwar-ով: Այս վայրը, Բոխտի-քուրդերի մի բուրգ: Ընկնում էր Ջազիրաթ-Իրն-Օմարի մօտը (Jaqut II, 957. IV, 312) և չպէտք է շփոթել Մահ աշխարհում գտնուած համանուն վայրի հետ: Մարքուարտը մատնանիշ է անում Մ. Հարթմանի այն ենթադրութիւնը, որով սա Հայոց Կանգուարը համարում է al-Kinkiwar-ը⁴. մինչդեռ ճիշտ դիտում է Հ. Հիւրշմանը որ Կանգուարը գտնուում է Վասպուրականի Անձեացիք գաւառում. ուստի և կարծում է, որ Մահկերտունը պէտք է որոնել աւելի հարաւարեւելքում⁵: Մեզ թուում է նախ հնարաւոր է Մահկերտանի Majrdan փոխուելը, ինչպէս որ Hyrcania-Վրկանը Djordjan⁶ է դարձել և հենց արաբ Եաքուտին Վասպուրականը կոչում է Basfurdjan⁷, իսկ Ատրպատականը Ազրբեջան ևլն. այնուհետև պէտք է ասել, որ թէև Հարտմանի ենթադրութիւնը հիմնաւորուած չէ, բայց ճիշտ է. և թիւրիմացութեան պատճառը Եաքուտն է և ոչ Մարքուարտը: Մի տեղ IV, 312, որի վրայ Հարտմանը հիմնուում է, Եաքուտն ասում է, թէ Kinkiwar-ը «Մի ամուր» լաւ պահպանուած բուրգ Ջազիրաթ-Իրն-Օմարի

1. Բուզ. Ե, Թ, 214: 2. Անդ. Ե, Ը—ԺԹ, 213—217:

3. Eransahr, 24: 4. Martin Hartmann, Bohtann, էջ 128, 3, 40, Berlin: 5. H. Hübschmann, Ortsnamen, 320, Հմմտ. 342—343: 6. Lebeau du Bas-Empire, X, XVI, էջ 333, ծանօթ. 2. Paris, M. Dccc. XXVIII: 7. Եաքուտ I, 624 առ Հ. Հիւրշման, Ortsnamen I, էջ 211, ծանօթ. 1:

մօտ, համարում է Ազգաւազան նահիէի բուրդերից և պատկանում է Ալմաւսիլի իշխանին¹. մինչդեռ մի այլ տեղում II, 957 յայտնում է, թէ Իբն-Ալատիրն ասում է. «Ազգաւազանն է մի ընդարձակ նահիէ Տիզրիսի արևելեան կողմը, Չաղիրաթ-Իբն-Օմարին պատկանող. նա հասնում է մի կէտից, որ մօտհաս երկու օր Ալմաւսիլից հեռու է, մինչև Խիլաթ երկրի սահմանը, նորա դրսի ամենահեռու սահմանը հասնում է մինչև Adarbigan մինչև Սալամաս նահանգի սկիզբը [սահմանը]: նորա մէջ կան շատ ամուր բերդեր, որոնք բոլորը պատկանում են Basnawi և Bocti քուրդերին. Բաշնաւիների բերդերից են galat borqa և qual at basir. Բոխտի քուրդերին պատկանում են galat gurdagil, նոցա գլխաւոր բերդը և թագաւորի աթոռանիստը, atil, allus, և հանդէպ alhira-ի (?), Ալմաւսիլի իշխաններին պատկանող՝ alqi, ապա arvach, bachaucha, barcho, Kinkivar, nirwah և chausab»²:

Առաջին վկայութիւնը, ինչպէս երևում է, առնուած է այս երկրորդից, ուր յատկապէս Kinkivar-ի Չաղիրաթ-Իբն-Օմարի մօտ լինելու մասին խօսք ուղղակի չկայ. այդ արդէն Եաքուտինն է երևում: Եաքուտը կարծես թէ անտեղեակ է երևում և Kinkiwari-ի տեղին, երբ ա. վկայութեան մէջ ասում է, թէ «համարում է Ազգաւազանի բերդերից», որից և կարելի է միաժամանակ ենթադրել, թէ Kinkivar-ը հեռու է կենտրոնից՝ Չաղիրաթ-Իբն-Օմարից և Ալմաւսիլից: Եւ յիշուի բ. վկայութիւնից երևում է, որ Չաղիրաթ-Իբն-Օմարին պատկանող Ազգաւազան նահիէն շատ ընդարձակ է, որի ամենահեռաւոր սահմանը դէպի հիւսիս հասնում է Խիլաթ և միւսը՝ ի հարկէ արևելեանը հասնում է մինչև Ատրպատական, մինչև Սալամաս, այժմեան Սալմաստը: Երբ այս պարագան ի նկատի ունենանք, բնականաբար պիտի ենթադրենք, որ բերդերը հաշուելիս էլ Եաքութը կենտրոնից

1. Bohtan, § 114, էջ 40: 2. Անդ. § 1, էջ 3: Եաքուտը քիչ վերև յայտնում է. «Չաւազանուն մի գեղեցիկ նահանգ է Հաստանի լեռների, chilat-ի, adarbigan-ի, dijarbake-ի և almausil-ի միջև. բնակիչները Հայեր են, սակայն այնտեղ կան և քուրդ ցեղեր»:

դէպի հիւօխարեւելք— Սալամաստ է ընթանում: որի ապացոյց է վերջին անունը խօշար: «Հին և պատմական բերդաքաղաքս կը գտնուի համանուն գաւառակի կենտրոնական արեւելեան կողմը Վանայ արեւելահարաւը . . . 7 ժամու ճանապարհ հեռու . . . : «Ծանօթ է նաև Մահմուդիէ անունով»¹: Կայ և համանուն «Գաւառակ Վանայ. սա ի հնում Անծեւացեաց և Մարդաստան գաւառի մէկ մասն էր կազմում . . . բաժանուած է վերին և ներքին խօշապ . . . : Այս երկու մասը շրջապատուած են արեւելքէն Աղձակ արեւմուտքէն Վան—Տոսպ, հարաւից մասամբ Երուանդունիք և հիւօխսէն Առբերանի»: Մենք այսպիսով մօտեցանք մեզ ծանօթ Անձեւացեաց և Աղբակ գաւառներին, որոնցից՝ ինչպէս և խօշարի սահմաններից դէպի արեւելք գտնուում է Սալամաստը: Այստեղից պարզ է, որ Եաքութի բ. վկայութեան վերջին խօշար անունից առաջ գտնուած անուններն էլ շատ հեռու չպէտք է լինին: Եւ ահա խօշապի հարաւային սահմանի հին Երուանդունիք գաւառից էլ հարաւ գտնուում է հին Անձեւացիք գաւառը, որտեղ և գտնուում էր Kinkiwar-ը՝ Հայոց Կանգուարը: Եւ ի զուր չէ, որ Մ. Հարամանը Kinkiwar—Կանգուարի և խօշապի միջև գտնուած nirwah բերդը որոնում է Զաւի ափին²: Իսկ Ալմաւսիլի իշխաններին պատկանող այս երեք և այլ յիշուած բերդերից ամենառաջինը alqi-ն, մեր պատմագրութեան Ալկին, այժմ էլկի, շատ աւելի հարաւ է գտնուում. բայց որը կենտրոնին մօտիկ է գտնուում, այդ էլ յայտնի է:

Արդ եթէ Եաքուտը բ. ընդարձակ վկայութեան մէջ Ազգաւազանի համար ասում է. «Նորա ամենահեռաւոր սահմանը դրսից հասնում է մինչև Ädarbigan մինչև Սալմաս նահանգի սկիզբը», այդ չէ նշանակում ի հարկէ, թէ Սալմասի նահանգը ջոկ երկիր էր և Աղարբիջան—Ատրպատականը ջոկ երկիր, այլ որ Սալմաստը Ատրպատականի մի մասն էր, լիւնելով Ատրպատականի մի նահանգը, մինչև ուր հասնում էր Ազգաւազանի արեւելեան սահմանը: Այսպէս էլ պէտք է

1. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ Բառ. 1907, Վենետիկ:

2. Bohtan, 41:

ուրեմն հասկանալ նախ Մատուղիի խօսքը—որ դժբախտաբար Մարքուարտը բառացի մէջ չէ բերում—որ Majrdan-Մահկերտ-տունը Անձեացեաց Kinkiwar-Կանգուարի մօտ էր. որովհետև յամենայն դէպս այս երկուսն աւելի մօտ լինելով Ատրպատականին, եթէ նոյն իսկ Մատուղիի ժամանակ և կամ իմանալով սորա մասը չէին, կարող էին Աղարբեջան-Ատրպատականում համարուել, քան սորանից շատ աւելի հեռու դէպի արևմուտք գտնուած Ջաղիրաթիրն-Օմարը: Եւ այս այնքան աւելի հաւանական է, որ Անձեացիքը սահմանակից է, ինչպէս տեսանք սակաւ ինչ վերև ևս, Վասպուրականի Աղբակ-Մեծ Աղբակին, այլ և Կորճէից-Կորդուաց Փոքր Աղբակին, որից ուղիղ հիւսիս դէպի Անձեացիք գտնուում է և այժմեան Արաբի-գաղը, ուր փրնտոնեցինք Փոքր Աղբակի Սրինգը, եւ այստեղ ինչպէս թ. Արծրունին յայտնեց, ապրում էր «Կին ոմն յաղգէն Աշգահայ . . . և ունէր կինն . . . դուստր մի Անուշ անուն» (Գ. ա). և միաժամանակ՝ թէ Աշգահայի զարմը ապրում էր ոչ միայն Կորճէից-Կորդուաց աշխարհի փոքր Աղբակ գաւառում, այլ և Վասպուրականի Մեծ Աղբակում: Իսկ մենք այստեղ ցոյց տուինք Հայաստանի «Մարաց ամուր աշխարհը, երկիրը, կողմանքը և գաւառը» և միևնոյն անունը կրող Մարգեաւառը—այժմեան Պարսկահայաստանի մասում, Բարագոստ և Թերկեւէր գաւառներից սակաւ ինչ հարաւ—որ սահմանակից է Տաճկահայաստանի Գեւէր ու Շեմգինան գաւառներին:

Այժմ այլ ևս տարահոյս չէ մնում, թէ Մահկերտուն-Մաջրըղանն ևս Kinkiwar-Կանգուարի շուրջը պէտք է որոնել, որոնք հաւանօրէն հենց միևնոյն վայրն են: Ազաթանգեղոսը Գ. Լուսաւորչի քարոզութեան սահմանները արևմուտքից դէպի արևելք որոշելով այսպէս վերջացրեց. «Եւ առ Կորդուօք մինչև յամուրն աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքըր տան իշխանին, մինչև յԱտրպատական»: Արդ ըստ ամենայն հաւանականութեան այստեղ ևս, ինչպէս վերև նաքութի վկայութիւնը բացատրեցինք, պէտք է հասկանալ, թէ Մահքըր-տուն-Մահկերտ-տունը Մարաց ամուր աշխարհի

մասն էր: Արդեօք այսպէս չէ՞ հասկացել և Ազաթանգեղոսը՝ երբ ձեռագիր Ե-ն տալիս է «մինչ առ տամբն»¹ ընթերցուածքը. ինչպէս թէ ասէինք. մինչև Այրարատ աշխարհը, մինչև Արագածոտն, Ոստան և ին. մանաւանդ որ հենց այդ է ցոյց տալիս Կորդուքից յետոյ և Մարաց ամուր աշխարհի և Ատրպատականի միջև յիշատակոււմը. որով ուրեմն Մահկերտունը այս աշխարհների միջև և կամ սահմանակից էր:

Եւ հենց միևնոյնն է ցոյց տալիս Մահկերտան անուան առաջին վանկը իւր նշանակութեամբ, որ կազմուած է ինչպէս հայերէն Հայկերտը²: Թ. Նէօլդեկէն ասում է. «Mah-ը՝ ինչպէս Լագարդն և Օլսհաուզէնը ապացուցելեն, է Mada-Մեղիա-Մարաստանը, բայց սահմանափակ նշանակութեամբ միայն արեւմտեան Մեղիա-Մարաստանի մի քանի երկրների համար է զործածոււմ»³: Ահա ուրեմն մեր Մահկերտ-տունն էլ ընկնում է իրօք Մարաստանից բոլորովին դէպի արեւմուտք: Բացի այդ հայերէնում ոչ միայն կայ ուրեմն հնազոյն Մահ ձևը, այլ և Մայ, որ ունի Թ. Արծրունին. թէ հայերէնում եղել է և Մաղա ձևը, այդ երևում է Նիւքար Մաղէս Արամի հակառակորդ Մարաց իշխանի անունից. սակայն հայերէն բուն և միակ զործածական

1. Ազաթանգ. § 842, էջ 440:

2. Յովհաննու Մամիկոնեանի կախկոպոսի Պատ. Տարօնոյ էջ 56. Վենետիկ 1889: Հրատարակիչը դիտում է ծանօթութեան մէջ. «Ի չորս օրինակս Հայկերտ», որ գուցէ աւելի ուղիղ համարուի, եթէ ինկատի առնենք, որ հայր մարդպետներից մէկը Դ. դարում Տարօնում կամ սեփական կալուածքներ է ունեցել և կամ գոնեա կառավարել է Տարօնի արքունի կալուածքները (Բուդ. Դ, ԺԴ, 116—119), որի անունով կարող էր մի որ և իցէ վայր կոչուել է այս կամ այն պատճառով. մանաւանդ եթէ ինկատի ունենանք կեռս վերջաւորուած վայրերի կազմութիւնը (Ortsnamen, 284): Սակայն Յ. Մամիկոնեանի խօսքը «Ահաւասիկ են ընդ Հայկերտը: Եւ կոչեցաւ անուն տեղոյն Հայկերտ» ցոյց է տալիս, որ իրօք տեղը այդպէս է կոչուել: Իսկ Մանկերտի կազմութիւնն էլ գալիս է ապացուցանելու, որ Հայկերտ ձևը ոչ միայն հնարաւոր է, թէև հազուադէպ, այլ շատ աւելի հաւանական:

3. Tabari, էջ 103. ծանօթ. 2. Հմմտ. և Eransahr, էջ 18—20:

ձևն է Մար, որով ուրեմն Մահկերտ—Մարկերտ. ճիշտ
 Խորենացու Մար-ա-կերտը: Եւ Մարակերտը իսկապէս մի-
 այն մի քաղաքի անունն է երևում: Թէ ըստ կազմութեան
 և թէ ըստ Խորենացու. բայց և Մահկերտ-տունը հաւանո-
 րէն եղել է և մի երկիր, մի դաւառ կամ զոնեա գաւա-
 ռակ» ինչպէս որ մենք ունինք ճիշտ յար և նման մի այլ
 օրինակ «Անդեղ ամուր բերդ» և այն էլ ի հարկէ «Անկեղ տան
 գաւառում»¹, և Ոստան՝ քաղաք, Գուինը, և դաւառ² և
 «Ոստանեայ տուն»³: Եւ ըստ ամենայն հաւանականութեան
 Մահկերտը միևնոյն Կանգուար-Աղաւաքարն է, որ հետ-
 ցհետէ տեղի է տուել հայկական ժողովրդական անուան
 որի հետ և կապուած է Մհերի աննդութիւնը, ինչպէս
 Արտաւազդինը Մասի հետ: Եւ մինչդեռ ժողովրդի մեջ
 ցարդ Կանգուար-Աղաւաքարի հետ կապուած Մհերի ա-
 ւանդութիւնը հարաւումն ապրել է ժողովրդական Զոջանց
 տան վէպում և դարերից ի վեր ցարդ հարաւում կենդանի
 է ամբողջ հայ ժողովրդի մէջ. Արտաւազդինը լոկ դասա-
 կան զրականութեան եղնիկին և Խորենացուն է յայտնի:
 որ Աղատ Մասի հետ է կապել, առնելով Գողթան վի-
 սապաններից. այն ինչ դիտելու է, որ եղնիկն Արտաւազդի
 հետ չէ կապում Մասիս անունը, որ և բնաւ չէ յիշուի:
 Այնպէս որ վերջիվերջոյ Մհերի և Արտաւազդի աւանդու-
 թիւնն աւելի անունների փոփոխութիւնն է, քան նոյն իսկ
 ձևափոխութիւն և հաւանօրէն հարաւից հիւսիս փոխա-
 դրուած:

Եւ ահա հենց այս Մահկերտ—Մարակերտը պիտի լինի
 և Արտաւազդայ-տուն կոչուածը, որ ժողովրդական երգում
 «Արտաւազդայ տարտանը» արբունի տուն՝ ոստան է կոչ-
 ուած: Այս կարելի է հետեացնել հենց Մ. Խորենացու մի
 այլ պատմուածքից, որով իւր Արտաշէս Բ.-ի որդին, իս-
 կապէս Արտաշիասի յաջորդ, Տիրանը երախնաւու Անճուա-
 ցուն «Մր առնէ կին զվերջին կանանցն Արտաւազդայ . . .

1. Բուզ. Դ, ԻԴ, 146 ԻԳ, 144:

2. Hübschmann, Ortsnamen, 365, 460:

3. Դ. Փարսլ. Բ, ԼԲ, 61:

Թողու յերախնաւու զամենայն տունն Արտաւազդայ . . . տայ նմա զզամն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զհօգս արեւելեան զօրուն ի նա հաւատացեալ, առ նմա Թողու զԻրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամացեալ էր ընդ նախարարս Վասպուրականի»¹: Եթէ յիշենք այս մասին երկար ու բարակ մեր ասածները և ի նկատի առնենք այս վկայութեան ընդգծուածքը, կը տեսնենք, որ այս բոլորը մեզ հարաւ են ուղղում, ինչպէս ցարգ շարունակ մատնանիշ էինք անում:

Թ. Նէօլդեկէն վերևի Mah-ի բացատրութեանն անմիջապէս կցում է. «Ես պահլաւերէնից ցոյց եմ տուել զեռ աւելի հին ձև Madikan «Մեդեր» յոգնակին (Karnamak)»: Այս արդէն զուցէ համապատասխանում է մեր «մարական» անուան² հայերէն ձևին, և միևնոյն ժամանակ յիշեցնում է Բոհտանից հիւսիս և Տիգրանակերտ-Մուֆարդինից հիւսիսարեւելք գտնուած քրդաբնակ Modikan գաւառը³, որ շայերը Մոդկան են արտասանում սովորաբար: Այս վայրերից ահա սակաւ ինչ հարաւ և զէպի արեւելք տարածւում է Masius-Ջուզին⁴, որի հետ, ինչպէս տեսանք, նոյնպէս կապուած է նոյեան տապանի ականդութիւնը, ինչպէս և մեր Մասիսի: Madikan-Modikan-ը Աղձնեաց աշխարհումն է, ինչպէս և Տիգրա-

1. Սորեն. Բ, ԿԲ, 140:

2. «Խաղացեալ ի ճուաշոտտ ի Գետս աւան . . . ի խաղս գետոյն երասխայ . . . ընդդէմ նայելով լեբանցն Այրարատեան ապտոն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ . . . Իսկ վայր խաղացեալ ի Մառական աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն երասխ» (Թ. Արծրունի, Գ, ԻԹ, 253 — 254. Հմմտ. Գ, Ի, 225. Գ, ԻԹ, 264): Գ. Սալաթեանցն ասում է. «Կարմիր գետի վրայ են գետեղում ոմանք Մարաֆեանդ, զուցէ թէ Մարակեռ անունից փոփոխուած» (Армян. Эпосъ VII, էջ 191. Москва 1896):

3. H. Kiepert. Carte Générale des provinces Européennes et Asiatiques de l'Empire Ottoman (sans l'Arabie) 1886, Berlin.

4. M. Hartmann, Boltan, I, § 99, էջ 32, Berlin.

նակերտ—Մուֆարդինը: Այժմ կարծում եմ աւելի է պարզոււմ Խորենացու [Վիպասանքի՞ ևս] շփոթութիւնը և հասկանալի դառնում: որ Տիգրան Հայկազեանը, այսինքն Տիգրան Բ. Մեծը, ասում է Խորենացին, «Յուզարկէ զքոյր իւր Տիգրանուհի... յաւանն... Տիգրանակերտ և զգաւառան զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ աղատութիւն ի զարմից սորա ասէ լեալս իբր թագաւորական զարմա: Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աժդահակայ բնակեցուցանէ յարեւելեաց ուսոց մեծի լերինն [Ազատ Մասիս] մինչև ի սահմանս Կողթան»¹:

Արդ ոստան նշանակում է արքունիք, արքունի տուն, և Հայոց մէջ «Ոստանեայ տուն» կոչուել է իսկապէս հին արքայական ցեղը: Խորենացին ասում է, որ իւր Վաղարշակը Մծբին է գնում. «Եւ զունդս և պահապանս դրան արքունի պատրաստէ զոբոս... ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան ի հարանց ստացեալ գեւդս և դաստակերտս: և անմիջապէս շարունակում է. «Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, յայլոց յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան... ի բաց ընկեցեալ զսզն, զայլս ի տեղիս նոցա յարուցին գունդս անուամբ արքունի Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց»²:

Ճատ ու շաղրաւ է Խորենացու այս վերջին վկայութեան տարբերութիւնն առաջինից: Այստեղ «Ոստան ազգը» հին Հայոց թագաւորական գարմ է, նախընթացում «Ոստան աղատութիւնը» Տիգրանուհու ցեղից. և հասկանալի է դառնում այս շփոթութիւնը, երբ աչքի առաջ առնենք, որ Աժդահակ «Մարաց թագաւորի» զարմն էլ ծագում է նորա միւս՝ Անոյշ կնոջից. մինը Արարադում, միւսն Այրարա-

1. Սորեն. Ա, 1, 57. Հմմտ. Գ, ԻԸ, 215: 2. Սորեն. Բ, է, 76—77. Հմմտ. Եղիշէ, Ա, 12. Գ, 142. Յովհ. կաթուղ. Գ, 29:

տու՛մ: Բայց ոստան բնականաբար կարող է և նշանակում է և արքունի քաղաքը՝ աթոռանիստը: Եւ Տիգրան Բ. Մեծ Հայկազեանի ժամանակ կայ երկու մայրաքաղաք. նորը՝ իւր շինած Տիգրանակերտը հարաւում՝ Արարադում և հինը՝ Արաաշատը հիւսիսում՝ Այրարատում: և երկուսն էլ երեւի հասարակ ժողովրդից կոչւում էին շահար, ինչպէս այսօր, իսկ այն ժամանակ ի հարկէ ոստան, ինչպէս դեռ Ե. դարում Դուինը և իւր զաւառը: Եւ ահա Խորենացին Հայոց բնիկ ոստանը, տու՛նը կամ «ազատութիւնը» իւր զաւառով փոխադրում է հարաւ. մինչդեռ նոր ոստանը իւր զաւառներով և անցքերով մնում են Մասիուս-Ջուզիի մօտերը, ինչպէս ժողովրդական զրոյցն ունէր. բայց որովհետև նորահարծիքով Հայոց վիպասանների Ազատ-Մասիսի շուրջն ապրող Վիշապագունքը Աժդահակի զարմն են և սոքա Մուրացաններն են, դուստի այս երկուսին փոխադրում է հարաւից՝ Արարադից հիւսիս՝ Արարատ և բնակեցնում հին ոստան Արաաշատի հանդէպ և ճարուրում են: Եւ այս այնքան աւելի հաւանական է, որ նա յիշեց երկու Աստան «ազգ» որոնցից «Առաջինը» նա համարում է «հատուտ հին զարմից Հայոց առաջին թագաւորների, որ Հայկից» էին սերւում: մինչդեռ միւսը «Պարսից թագաւորութեան» է վերագրում: Եւ միաժամանակ վիշապների ու դեւերի պատմութիւնը թէ Արարատում և թէ Վասպուրականում հնում և այժմ ինչպէս և այնտեղ և այստեղ ապրած Վիշապագունք-խալդերի պարագան ևս նպաստել է Վասպուրականի Մահկերտ-Ազոաւաքարի աւանդութիւնը և Արարատ-Մասսի շուրջը փոխադրել, որին անշուշտ նպաստում էր հարաւի և հիւսիսի նոյեան տապանի լեռան աւանդութիւնը:

Ամփոփելով մեր Մարաց աշխարհի մասին ատած ցարդ երեք մասերը, պնդում ենք. թէ մեր դասական հեղինակները Մարք-Մարաստանը և «Մարաց ամուր աշխարհ-կողմանք-երկիր-զաւառը տարբերում են: Վերջինս Հայաստանի մի մասն է կազմել Դ. դարում, ոչ թէ հիւսիսում Այրարատում՝ այլ հարաւում Արարադում: Վիշապագունք դեւերը

Մարերը չեն, այլ Հայաստանի բնիկները՝ Խալդերը և սոցա
 Հարսուութիւնը, քաջքերը՝ Ոստանիկ տունը՝ Հարսու-
 թիւնը, ապա և Արշակունիք, թէև քաջ-ղեւեր են միայն
 Մամիկոնեանները: Մուրացան նախարարութեան Հայոց
 թագաւորութեան «երկրորդութեան պատիւը» շփոթութիւն
 է Ատրպատականի Մարաց: Այս նախարարութիւնը, ինչ-
 պէս և իւր կալուածքները Վասպուրականում՝ Հարաւ-
 արեւելքում պիտի լինին: Այս պնդումը հաւանական է դառ-
 նում շնորհիւ Թ. Արծրունու պատմագրութեան, որով սա
 Աժդահակի սերունդը բնակեցնում է Արարադ աշխարհում
 Վասպուրականի Մեծ և Կորճէից-Կորդուաց փոքր Աղբակ
 գաւառներում: Այսպէս էլ նա հակառակ Խորենացու Տրդատ-
 Արտաշէսի անցքերը գնում է Վասպուրականում, ուր
 կրկնում են և անուններ, որ կան Այրարատում: Սոյն-
 պէս և Նոյեան տապանի լեռան աւանդութիւնը Կորդուաց
 աշխարհի Զուզի-Մասիուսի մասին կրկնում է Այրարա-
 տի Ազատ Մասսի վրայ, հաւանօրէն Հայոց հին ժողովրդա-
 կան զրոյցի հիմամբ, թէև վերջինս կարող է նախնականը
 չլինել: Այս հանգամանքներ ահա, ինչպէս և Մհերի Ազա-
 ւաքարի աւանդութիւնը և Արդաւազի Մասսինը շփոթել են
 Խորենացուն հարաւային անցքերը Մարաց ամուր աշխարհի
 և վայրերի անունների նմանութեանց շնորհիւ հարաւից
 Այրարատ փոխադրելու:

Հայոց հեղինակների Փ. Բուզանդի, Կորիւնի, Ազա-
 թանգեղոսի վկայութիւններից ևս երևում է, որ Հայաս-
 տանի Մարաց աշխարհ-գաւառը պէտք է հարաւարեւելքում՝
 Արարադ աշխարհում լինի, որ օտար հեղինակների Mar-
 comedi-ն է: Մարաց գաւառը ուրոյն բնդարձակ աշխար էր և
 անունը մնացել է ցարդ հարաւում, որ է Մարգեաւառը:
 Բուզանդարանի և Աղաթանգեղոսի Մահկերտ տունը հաւա-
 նօրէն Նոյնն է, ինչ որ Մասուզիի Ատրպատականում յիշ-
 ուած Մաջրդան քուրդ ցեղը, որի Kinkiar ամրոցը Ան-
 ձեացեաց Կանգուարն է «Մարաց աշխարհում-գաւառում»:
 հենց Մահկերտ նշանակում է Մարակերտ: Եւ պարսկե-
 րէնի հնազոյն Modikan-մարական ձևը, ինչպէս և Ոս-

տան տան արքունի ծագումը և մայրաքաղաքի նշանակութիւնն ևս բացատրում են դարձեալ Արարաղի և Այրարատի և այս տեղերում պատահած անցքերի, մանաւանդ Արտաշիասի և Տրդատ-Արտաշէսի պատմութեանց շփոթութիւնը: Եւ թերեւ իրօք կար մի այլ աւանդութիւն ևս, բայց որի Այրարատում մարական գաղթականութիւն է եղել, բայց որն անշուշտ Խորենացու ժամանակ արդէն կամ ձուլուած և կամ վաղուց հեռացած էր: Եւ այս ենթադրութիւնը շատ անհաւանական չէ, քանի որ Ատրպատականի Մարաց Արտաւազանը¹ տիրում էր Վասպուրականին և Այրարատին, որտեղից սակայն նորան Քրիստոսից երկու դար առաջ դուրս վճռեց և հասաւ մինչև Տմորիք հայ ժողովրդից այնքան սիրուած և վիպասաններից երգուած Արտաշիասը, Ոստանիկ հարստութեան և անկախ Հայաստանի հիմնադիրը, որի անունը դեռ այսօր էլ ժողովրդական զրոյցների² և դիւցազներգութեան³ մէջ փաղաքշարար հնչում է Արատուճ:*

Ս. Կանայեանց

1. Ահա այս մար Արտաւազանը գուցէ և Տրդատի Մեծի թոռ Հայոց և Մարաստանի թագաւոր Արտաշէսից մօտ քառորդ դար յետոյ Հայոց թագաւոր, բայց Մարաց Արիորարզանի որդի Արտաւազը (Th. Mommsen Römische Gesch. V, IX, 369, Berlin 1881) խառնուած Հայոց այլ Արտաւազների հետ (Ա. Մ. Գարագաշեան Քննակ. Պատմ. Հայոց Բ, Ժ, § 6—8, էջ 177—192. Թիֆլիս 1895) ամբողջացնում են պատկերը բարի՛ հայ և չար-դե՛ մար Արտաւազի:—Վիշապաղուն Արգաւանն էլ, երևի, Շահնամէի Աքուան դէն է: Բայց այս խնդիրների մասին այլ տեղում:

2. Էմինեան Ազգագր. ժողովածու, Բ, § 11, էջ 233—240. Մոսկուա-Վաղարշապատ 1901:

3. Ս. Հայկունի, Մօքոս ժողովրդական վէպ, Զ, էջ 79. Վաղարշապատ 1896:

* Այս Գ. գլխի յատկապէս ա. և գ. մասը 1912 ամի հոկտեմբերի 12-ին Գրերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակի առթիւ Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանի դահլիճում տեղի ունեցած գրական երեկոյթին բանախօսութեան նիւթ դարձաւ «Ս. Մեսրոպի քարոզած Մարաց աշխարհը» վերնագրով: